

—Աղբակի մէջ ջանչեանց որբանոց մը բացուեր է օգոստ, 1 էն սկսեալ և Պատրիարքարանէն նպաստներ սկսած են զրկուիլ:

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ը

Իաստիարակութեան արուեստին սահման մը դրած է Սէն-Պէռան անուանի մտամարզիչը. զայն դժելով՝ բարոյական, մտաւորական բնական սովորութեանց կայուն վիճակին տակ: Անհերքելի ճշմարտութիւն մըն է սա, որ կը տանի մեզ աւանդական առակի մը առջև թէ «հաստ ծառի բունը չուզուիր երբէք»:

Շատ պարզ է գիտնալ թէ, տղայ մը իր կեանքի առաջին օրերուն իսկ, քիմիան սովորութիւններ կ'սկսի ունենալ և ահա՛ ասոր համար է որ պարտինք այն վայրկեանէն գծել անոնց բարոյական, մտաւորական սովորութիւններուն կայուն ու յարատե վիճակի մը սահմանը:

Աստիճանաբար պիտի մեծնայ անոր բնական սովորութիւններն ու երթալով պիտի զարգանայ անոր մէջ բարոյականն ու մտաւորականը ինչ որ արգէն սովորութիւն է որ նոյնհետայն ռաիփիրայ մը պիտի ըլլայ ու սոյն կարողութեանց ալ դաստիարակութեան հիմը:

Քանի մը անգամներ կարգացեր ենք «Մօնթէն»ը, որ մեծ եռանդով խօսելէ վերջ «սովորութեան» մեր վրայ ունեցած ազդեցութեանը վրայ, կը վերջացներ իր խօսքը յարեով թէ՛ «տեսայ ու քննեցի որ, ամենէն մեծ մոլութիւնը, մեր մատաղ մանկութենէն է որ կ'սկսի և մեր բարոյականի հիմը զմեզ խնամողներէն կախում ունի: Անանկներ տեսայ որոնք զբօսանք կը սեպէին տեսնել թէ տղայ մը որ հաւի մը վիզը ուրբելով կը խեղդէր, կամ շուն մը, կատու մը կը շարնէր, կը վիրաւորէր ու չէին ջանար զայն արգիլել» և կըսէ «մեծ ապշութեամբ կը գիտէի թէ այնպիսիներ սոյն ամբարտաւանութիւնը իբրև սնագիւտ իմաստութիւն մը ու մեծ հանճարեղութիւն մը կը նկատէին...»:

Այս տեսակ տհաճ ու կործանող սովորութիւնք իրաւամբ ատելութեան, բռնութեան ու տգիտութեան ճշմարիտ սերմեր են՝ որոնք օր մը ուռճանալով կը թռոմեցնեն մանկանց մէջ ծնածց

բարոյականի և մտաւորականի փթթումը, որոնք օր մը իրենց քարափթիւր պիտի կազմէին:

Ինչո՞ւ չսորվեցնենք անզգալաբար բնական օրէնքներով, ատել մոլութիւնները, խորշեցնել զանոնք շարէն, զի սովորութիւնն է դարձեալ որ ոչ միայն պահպանող է, այլ վերանորոգիչ: Ան է որ կարողութեան յարաբերութիւնը կը փոխէ ու վրան պատկերացած գէշ յօժարութիւններու կը յաղթէ որ միայն «սովորութիւնն» է որ կրնայ մարդը ձուլել բարւոյն մէջ ու կատարելագոյն կերպարանափոխել զայն եթէ ատենէն իսկ զէպի լաւը, դէպի ուղիղն ու բարին դարձուած է:

Բացէք պատմութիւնը ու գժուար պիտի չըլլայ տեսնել ու ըմբռնել թէ՛ Սոկրատ ամեն կերպ մոլութեանց մէջ ծնած թէև, բայց կամքի զօրութիւնն է որ միացած սովորութեան օգնութեան, ուղիղ դաստիարակութեան հետ ընդելուզուած իր ճակտին վրայ գործմեցին ուղղութեան և բարոյականի արդար կնիքը:

Եւ ասոր համար է որ Լէյպնից իրաւամբ ըսած է. «Միշտ կը մտածեմ թէ մարդկութիւնը կը բարեկարգուէր, եթէ մանկանց կրթութիւնը բարեկարգ ըլլար»:

ՌՕՄԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍԳԵՐ

Անտարբերներէ պատճառուած վերքերը հետք չեն թողուր:

Միշտէ

Անարգանքը միակ վրէժն է մեծ պտերու: 4. Հիւկօ

Իւզանկարը կը ճանչցնէ, լուսանկարը կը յիշեցնէ:

Ռօպէնս.

Տխրութիւնը կեանքին մէջ այն է, ինչ որ անձրևը բնութեան մէջ:

Հ. Ս.

Մարդ ապրելով ապրիլ կը սորվի: Պրիւնթիէո

Արդարացնել անցեալ ոճիրները ներկային երևոյթով ու ներկային ոճիրները անցեալին օրինակով, այս է պատմութեան կրկնակի անմաութիւնը: 2. Ն.

Կրօնքը միշտ լուրջ անմեղութեան մէջ է .
երբէք չի ծերանար . իսկ գիտութիւնը արդէն
բարին ու չարը ճանչցած արեւոր մըն է :

Փրանքլին

Եթէ ժամանակը չանցնէր, ո՞ր մարդը աշ-
խարհի վրայ կը գիմանար :

Շիլլէր

Սրտով աւելի հաճելի կըլլայ մարդ քան
մտքով :

Կէօթէ

Հանճարը խաղաղութեան մէջ կը կազմուի .
իսկ բնաւորութիւնը աշխարհի հոսանքներուն
մէջ :

Նոյն

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Անբնակելի . — Կեսրոջ տունը .

Անէծք . — Պառաւնեքուն զէնքը :

Անկիրթ . — Առնելիքը պահանջել :

Ապտակ . — Առձեռն ծեծ .

Բարոյական . — Ունեցողը կը փնտռուի .

Անթութիւն . — Գրագիտաց ապագան .

Կանանց գլխարկ . — «Ժառուէն տէ ֆլէտ» .

Մենամարտ . — Առանձնաշնորհեալ մարդաս-
պանութիւն .

Նախանձ . — Աղջկանց հիւանդութեան գըլ-
խաւոր պատճառը .

Քահանայ . — Էր ժամանակ մը . հիմա խը-
րայուղ ալ է :

ԳԻՄԹՕ

Հարց—Պատասխանի

Տուն մը շինելու համար ո՞ւսկից սկսելու է
նախ .

— Յ Մ . (Հիմէն)

Շոգենաւի ճամբորդները ե՞րբ ահ ու սար-
սափ կուենան .

— Երբ մրրիկը Շ . Ռ . Ջ .

Գերձանը ո՞ր տեղէն կանցունեն ասեղին .

— Մ . Կ .

Ասեռախօսները ի՞նչէն կը քաջայերուին .

— Մ . Բ .

Հայտնիս կոչուած նուագին ընկերըը ա-
նունը ի՞նչ է .

— Ք . Մ . Ջ .

Ապուխտին վրայ ի՞նչ քսելու է որ համով
ըլլայ .

— Ջ . Մ .

ՅԵՒԱԳԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ .

Լոնտոն

Շահրիման իր հրատարակած «Եռուէս»ին
ետեւէն «Թէքէէ» մը պատրաստելու վրայ է, որուն
մէջ պիտի յայտարարէ թէ ինք մատնութեան
նամակի լմնգրոյն մէջ ս.ս միտքով վարուած է .

«Իմացուի նէ՛ կատակ է կըսեմ, չիմացու-
նէ՛ շիտա՛» :

Քամչաթ քա

Կազկլտակը հորէն սկսաւ ամեղցփեղ զուրս
տալ : Ըսողներ կան որ եթէ թերթին սիւնակներ-
ըը լեցնելու համար կը հիւրընկալուին ատոր
գրութիւնները, աւելի լաւ կըլլայ անոնց տեղ
Սաղմոսէն 1-2 պուխ բան արտասպել :

Իսկէլէ Պօյու

Ընդ բարձր նախագահութեամբ հոյակապ
եսամալի եւ ընդ բարձր ատենագրութեամբ տիե-
ղերաստտ կազկլտակի՝ Բուսճուքէն, Պուրկազէն
եւ Յիլիպէն եկած հին կուսակցութեան մը և-
րեք լիազօր տեփութատներու մասնակցութեամբ՝
կարգ մը անձինք համերայնութեան մը դալու
համար Բաբելոնական ժողով մը գումարեցին սըր-
ճարանի մը քաւլան իջին, ուր շուրը հապա-
նը գրած լաւ մը ծեծելէ ետքը՝ վերջապէս յոգ-
նեցան ու առին քալեցին :

Մ . Կազկլտաք լրջօրէն յայտարարեց թէ՛
անմիջապէս գրի պիտի առնէ համերայնութեան
մասին խոհուն եւ երկայն ուսումնասիրութիւն մը
որ իր հանճարային կամ բանճարային արտագրու-
թեանց գլուխ գործոցը պիտի ըլլայ եւ զոր Բ .
անգամ գումարելի ժողովոյն մէջ կարողալէ ետքը
առ ի հրատարակութիւն պիտի յանձնէ տեղա-
կան թերթի մը, տնոր ընթերցողներուն գլուխ-
ներն ալ ուռեցնելու համար :

Բոժ . — Աստուած պօյ պօյ համբերութիւն
տայ մտիկ ընողներուն :

ՁԵԿՈՅՑ

Եէնի մահալլէի բնակիչներէն «Էղսիկ տու-
տուին տանտիկնութիւնը» նկարագրող զուարճա-
լի յոդուածը տեղի անձկութեան պատճառաւ
յաջորդով պիտի հրատարակենք :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԻՆՈՒ ՄԷՋ

Ա.

—Հայր, չեմ ուզեր ամուսնանալ, կ'ըսէր միսիոնարի մը քրիստոնէայ Չինացի աղջիկ մը, որ իր քրիստոնէական դաւանանքը ըսելու եկած էր իր ամուսնութեանը առթիւ:

—Ուրեմն ինչո՞ւ կ'ամուսնանաք:

—Ծնողքիս հնազանգելու համար:

—Սակայն այս կարգի խնդրի մը մէջ քու կամքդ պէտք է վճիռ տայ. ամուսնութիւնը չէ՞ք սիրեր:

—Ընդհակառակը շատ կը սիրեմ:

Չինու մէջ չկայ ո՛ր և է եւրոպացի միսիոնար մը, որ լսած չըլլայ այս խոստովանութիւնը: Ամուսնութեան տենչալ, ամուսնանալ չուզելը յայտարարել և սակայն ամուսնանալ, Եւրոպացիին իր ուղիղ անկեղծութեան մէջ այդ օրինակ կեղծիքներով չի պարտկեր իր ամուսնանալու նպատակը: Ժողովուրդի զաւակ Չինացի աղջիկ մը միշտ այս լեզուով կը խօսի. արտաքուստ կը քամահրէ այն բանը որուն ներսէն այնքան բուռն կերպով կը տենչայ: Բայց ինչո՞ւ պահուրտուքի այս անմիտ խաղը:

Նախ կեղծ համեստութեան ցուցամուտութիւն մըն է աղջկան կողմէ, որ մեծապէս կը բերկրի իր ամուսնութեան վրայ. բայց պարկեշտօրէն ամէնուն առջև կը յայտարարէ թէ շատ գեղեցիկ և վեհ բան է կոյս մնալ այսինչին կամ այնինչին պէս, ու կեղծաւորաբար կ'աւելցնէ թէ իր ծնողքին հնազանգելու հարկաբերած է դժբախտաբար: Երկրորդ պատճառը իր ծնողքին նկատմամբ զգացած չափազանց սէրն է: Իմ սիրելի ծնողքս այնքան խնամք ու հոգածութիւն ունեցած են վրաս, կ'ընէ կարգեցու աղջիկը պէտք է ամենօրեայ անձնուիրութեամբ մը փոխարինեմ անոնց բարիքը: Եւ սակայն թող չեն տար որ կ'աւելցնէ, իմ երախտագիտական պարտքս հատուցանեմ:

Աղջկան ծնողքը ամուսնութենէն երեք ծր առաջ, ընչա՛ վառելով անբուն կը հսկեն երեք գիշեր, ցոյց տալու համար անհուն սէրերնին իրենց աղջկան վրայ, որ քիչ յետոյ անձանօթին գիրկը պիտի նետուի ալ: Իրաւ է թէ աղջիկը գիտէ իր ամուսնութեան օրը, բայց որո՞ւ հետ պիտի կարգուի. ատիկա ահարկու անեղծուած մըն է իրեն համար: Նշանածները երբեք չեն տեսներ իրար և ոչ ալ իրարու հետ կը խօսին. գէթ Չինացի քրիստոնէաներուն մէջ Այս պարագային մէջ ամուսնացող նորոստի աղջիկ մը իրա-

ւունք ունի վախնալու, թէ եւ ամուսնութեան գաղափարը զինքը հրճուեցնէ: Ամուսնութեան օրը գիւրաւ չորոշուիր: Հարցուկներու գործն է անիկա, որոնք դրամական վարձատրութիւն մը կը ստանան՝ երջանկութեան օր մը որոշելու համար: Աղջկան ծնողքը ամուսնութեան օրը իմաց կուտան նշանածին ծնողքին, որոնք կը պատասխանեն թէ նշանտուքի պայմանագրութեան համաձայն իրենց ընծաները պիտի լրկեն: Աղջկան ընտանիքը երկիցս կը մերժեն այդ նուէրները, ցոյց տալու համար թէ դժուարաւ կը բաժնուին իրենց զաւակէն: Երրորդ անգամուն զըրկուած նուէրները կ'ընդունուին, որոնք հանգիստաւ թափօրով մը կը տարուին, ամէնուն հասկցնելու համար թէ նշանածը անկուտի տիրող մը չէ:

Ամուսնութեան միջնորդը, որ նշանախօսութեան և այլնի մասին կը բանակցի, գեղեցիկ ձիւ մը վրայ հեծած ճամբայ կը բանայ: Յետոյ կուգայ ծառայ մը որ կը կրէ թղթակալ մը ուր ընծաներուն ցանկը նշանակուած է կարմիր թուղթի վրայ: Անոր ետեւէն կը յառաջանան թմբակահարները, նուագածուները և ծառաներ որոնք այլ և այլ կերպուրներ ու պահածոյ ուտելիքներ կը տանին. ասոնցմէ զատ ութ սպասաւորներ ալ կը հետեին թափօրին, ազդագիրներ բանած, որոնք խօսուին խորհրդանշաններով զարդարուած են, ինչպէս արծիւ մը, վիշապ մը, երկու բաղ: Բոլոր այս աւատածեւունութիւնները ուրախութեամբ կ'ընդունուին աղջկան ընտանիքին կողմէ, մինչ նուագածութիւնը, հրթիռները եւ թնփանօթները դժօրային աղմուկ մը կը հանեն:


Քանի մը օր յետոյ, մքենայն հտնդիսաւորութեամբ թափօր մը կուգայ աղջկան տունը, իրեն հետ բերելով աղջկան հարսանեկան զգեստները ապագայ ընտանիքին գործածութեան համար գզրոցներ, սնտուկներ, հոտարաններ, սեղաններ և խոհանոցի անօթներ: Ասոնց կ'ընկերանայ նաև գեղեցիկ արկղիկ մը, խնամով գոցուած, որ կը պարունակէ փոքրիկ կօշիկներ, մետաքսով բանուած շիւական ամօթխած ութիւնը կ'արդիւն զայն տեսնել: Թափօրը կը վերջանայ գառագարակով մը օրուն վրայ, անկողնի կազմաները դրուած են:

Ընծայ տանողները ի սկզբան կը մերժեն տուն մանել. Բայց խաչոր պարզե մը ամէն ինչ... կարգի կը գնէ, ինչպէս Եւրոպայի մէջ ալ կը պատահի այլ և այլ առթիւ: Աւելորդ է ըսել թէ հարուստները միայն կրնան այդքան պերճանք ցոյց տալ: Միւս գոտակարգերը ճարտար հնարքներու կը գիտեն այդ ամուսնական սովորութիւնները անթերի կատարելու համար:

Պզտիկ վարձքի մը փոխարէն հարկ եղած ընծայի առարկաները փոխ կ'առնեն դրացիներէ կամ վաճառականներէ ու արարողութենէն յետոյ կը վերողարձեն իրենց սեղերը :

Ամուսնութեան նախընթացօրը պատտայական քուրմերը մանչուն տունը կը հրաւիրուին, որոնք երկարադօթ քներով աստուածներու օրհնութիւնը կը խնդրեն ամուսնացողներուն վրայ : Աստուածներուն թղթէ պատկերները ճրագներու և մոմերու միջև զետեղուած են : Անոնց առջեւ անուշահոտ փայտեր կը վառեն և անոնց կը մատուցանեն խնձօք մը որ կը բաղկանայ հաւէ մը եւ խոզէ մը : Բայց խոզին գլուխը եւ պոչը միայն աստուածներուն առջեւ կը դրուին մնացեալ մասերը հրաւիրեալներուն կը տուին հարսնիքէն դառնալէն յետոյ : Նոյն միջոցին աղջկան ծնողքը անվերջ յորդորանքներ կ'ընեն : հարսին իր ամուսնական պարտաւորութեանց մասին, յորդորանքներ զորս ծնողքները իրենք իսկ չեն դործադրեր իրենց ամուսնական կեանքին մէջ : Բայց սովորութիւն մըն է որ պէտք է յարգուի : Սակայն աղջիկը ականջ չի կախեր այդ ամէն խրատներուն և աւելի զբաղած է իր հարսնական արդուզարգով : Ամուսնութեան առաջին տարիները հրթիռներ կ'արձակուին, տարիքներն առած կիներ հարսին արդուզարգովը կը շքադին : Փետան մետաքսեայ երկար զգեստ մը կը հագնի, նուագածսներուն պէտք երկու ժամ առաջ ածիլուած փետային գլխուս եւ այտերուն վրայ կը պտտոյնէ ածելին : Յետոյ առաջիններէն աւելի շքեղ թափօր մը կը կազմուի, որ պաշտօն ունի երթալ հարսը բերելու :

(Շար.)



Հարուստ կալուածատեր մը իր վարձուորներէն մէկուն աջելութիւնը կ'ընդունի, որ տարեկան պարտքը վճարելու համար եկած էր : Բաւական տեսակցելէ վերջ, կողմնակալները փորձերն փոքր թիւով փոխակցութեան և խորթելով ճաշի վարձքը քնէր զայն քամանակ անցնելու համար եւ ըստ այնմ պէտք կգտէ հրամանները կուտոյ ծառաներուն :

Քամանակը գալով սեղան կը նստին դէմ առ դէմ :

Սպասուորը նախ սեղան կը բերէ պնակ մը, որուն մէջ միայն երկու ձուկ կար, մին խոշոր պատուական

«իւլիֆեր», իսկ միւսը պզտիկ «չնագօր» մը : Ծառան իր տիրոջը նախապէս տուած գաղտադոցի հրամանին համաձայն ձուկին պնակը այնպէս մը սեղանին վերայ կը դնէ որ խոշոր ձուկը տիրոջը կողմը կը գտնուի իսկ փոքրը վարձուորին որ այս «խաղը» չի կլլելով, անմիջական վարպետութիւն մը կը մտածէ խոշոր ձուկը ինք լափելով պզտիկը կալուածատէրին ձգելու համար : Ը շտապաւ շոքր ձուկին կը մօտենայ ու անոր ականջն ի վարցած ձայնի բաներ մը զուրցելէ յետոյ, ձուկին պատասխանը ունկնդրելու ձեւ մը կ'ընէ եւ անմիջապէս պնակը կը դարձնէ խոշոր ձուկը իր կողմը բերելով որուն ականջն ի վար այ բաներ մը զուրցել եւ անոր պատասխանը մտիկ ընել ձեւացնելէ յետոյ բարկութեամբ «վայ անզգամ» կը գոչէ ու «իւլիֆեր»ը խածնելով կը սկսի պատուական մը ուտել :

Կալուածատէրը ապշելով կը հարցնէ
— Ի՞նչ խօսեցար այս ձուկերուն հետ :
— (Ժպտելով) . Չընաբօրին հարցուցի թէ քանի՞ տարեկան էր : «Կալ չեմ գիտեր ըստ ամենայն բաղաբարութեամբ : Իւլիֆերին հարցուցի : Ես ալ իւլիֆերին հարցուցի, բայց անիկա փոխանակ պատասխանելու անվոյել թօսք մը ըրաւ, այնպէս որ արժանապատուութիւնս խայթուելով չի կրցի ինքզինքս զսպել ու խածի, օխ լըլլայ : անպիտանը թող քաղաքավարութիւն սորվի :

Բարից, Օրերս-Քոնիֆի մէջ, ներկայացնան մը պահուն, հանդիսական մը զգուշութեամբ ոսփի կեղայ տը կը ջանայ իր տեղէն հետանալ, Սակայն մօտը գնեռողները թող լին սար ու միաբան կրսեն :

— Արարուածը ընկնալէն յետոյ, պարուն, ընկնալէն յետոյ :

Հանդիսականը ձայն չի հաներ ու տեղը կը նստի : Բայց քանի մը վայրկեան ետքը զարհուրելի գանձահոստիսն մը կը քսուածուի իր քիկնարոնէն :

— Ինչու ելիք, պարուն, կաղաղակեմ քոյիւնները՝ քիթերէն քոնելով :

— Արարուածը ընկնալէն յետոյ, ընկնալէն յետոյ, կը պատասխանէ հանդիսականը հայրսօրէն :

Գիւնայիլն մէկը օր մը վերջապէս կիկ մը կը գնայ, որուն հետ կ'ամուսնանայ :

Հարսնիքին գիշերը, սովորական արարողութեան արարուածէն ետքը կրսէ կնոջը :

— Կնիկ, արքնցար գիւ, երբ ծարսուեալ :

— Բայց, կ'առակէ ստուսիկը, ի՞նչպէս կըրնաւ գիտնալ, քանի որ պիտի քնանա :

— Ուզած ասեւնդ արքնցո՛ր զիս, կթ պասսա-
խանէ մարդու կը, ասեւն ասեւն ծարար կըրջաւ:

Նկարչի մը խանութիւն մէջ .

— Անցեալ օրուան Տեսած պատկերս ծախե-
ցի՞ք .

— Այո՛, հազար Քրանսիփ:

— Իրա՛ւ. ես կը ճանչնամ մէկը որ ձեզի կըր-
կինը պիտի վճարէր աքաւս մը զայն Տեսնելու հա-
մար:

— Ըսել է որ այդ մարդը պարկերներու ճշմա-
րիտ սիրահար մըն է:

— Առա՛ղ, ոչ. կոյր է:

Տիկին մը մտախառն խանութը զայցած
ըրաւով զնումներ կատարելու համար, հոն շուն
մը կը Տեսնէ ու կը հարցնէ մտախառնին .

— Ձեր շունը միս չի՞ գողնար:

— Ո՛չ, տիկին, շատ շատ քիչ մը կը լցէ . . .

“Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի”

“Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ Ի Պ Ի” խմբագրութեան այս նոր թեր-
թի անդրանիկ պրակը հրատարակուած է հետեւեալ
պարունակութեամբ .

Յօդուածներ

Երեմ. Հ. Ս. Օգնենք ու գործենք (խմբագրական):
Ղազիկեան. Հ. Ա. — “Այտայի հրատարակչ” ոչ-
բերգութիւնը:

Երեմ. Հ. Ս. — Գեղունի (Նկարագիր տիեզերա-
հըռչակ երգչակետաց և Վենետիկոյ ներկայ գեղարուես-
տի ցուցահանդէսին, և այլն):

Թրքահայ Դէմքեր (Պ. Օտեան. — Ս. Մայրապետ
Գալֆայեան. — Տօրթ. Փէշտիմալ ձեան):

Էփրիկեան Հ. Ս. — Դավրէժ տեղեկագրական նը-
կարագիր):

Պատկերներ

1. Իտալ. երաժշտական փառքերու Ռոսսինիի, Պելլի-
նիի, Տոնիճէթթին և Վերտի խմբանկար:
2. Ապաստան մեղաւորաց (Վենետիկոյ ցուցահանդէսին
սրտաշարժ պատկեր):
3. Դարձ ձկնորսութենէ (գլուխ դորձոց տանիմարգա-
ցի Անքեր Միքայէլ նկարչի. զարդ Վենետիկեան ցուցա-
հանդէսին):
4. Այս տարուան մէջ վախճանեալ երկու հոշակաւոր
իտալ.
5. Նկարիչներու գլուխ գործոցներուն գեղեցիկ պատ-
կերներ:

6. Պ. Օտեան:
7. Ս. Մայրապետ Գալֆայեան:
8. Տ. Փէշտիմալ ձեան:
9. Դավրէժի Թամարեան ժանկապարտէզի աշակերտաց
խմբանկար:
10. Դավրէժի Բերգաթաղի տեսարանը:
11. Դավրէժ բաղաբի ընդհանուր տեսարան:
12. Դավրէժի Հայ Օրիորդաց Թամարեան ուսումնա-
րանը:

Կողբը

Կողբը արտաբնական գարգարուած է զբերու ծա-
նուցումներով: Կ'ընդունուին յայտարարութիւններ, իւ-
րաբանչիւր տող կ'արժէ 50 սանդիմ:

Կողբը ներքին երկու երեսներուն վրայ՝ կը պարու-
նակէ ժամանակակից ազգային նոր և կարեւոր տեղեկու-
թիւններ, բաղուած հայ լրագիրներէ: Բայց աստի բազ-
մաթիւ նոր գիւտերու վրայ տեղեկութիւններ: Աձէնն ի
միասին հրատարակուած են ժանրատու ութը երկայն
սիւնակներու մէջ:

“Գեղունի” կը հրատարակուի երկու ամիսը մի
անգամ:

Տարեկան Բաժնեգինն է 3 Փրանք: 1 րբ. 50 կո-
պէկ:

Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէսը առանց
կրօնքի խտրութեան, կը յատկացնենք Ազգիս Որբիկ-
ներուն:

Ապառիկ Բաժնորդագրութիւն բացարձակապէս
չընդունուիր: Կ'ինը կանխիկ է:

Բաժնեգին, նամակ, և այլն, Ուղղակի հետեւեալ
հասցէին յղելու է

“Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ Ի Պ Ի”

Սէն Լազար Վէնիզ (Իթալի)
Ռուսաստանի և Ամերիկայի ազգայինը դիւրաւ ըս-
տանալու համար կարող են գիմել հետեւեալ մեր դոր-
ծակալաց
Ռուսաստան. — Պ. Գալուստ Գալուստեան Թիֆլիզ
Ամերիկա. — “Հայրենիքի” խմբագրութեան
Պոսթոն Մաս

Ա Յ Ի Ն Է Ի Լ Է Թ Ա Յ Ի Ք

Պ Ի Ն Պ Ի Ր Ա Տ Է Տ

(Մ Ի Ի Ն Տ Է Ի Ի Զ Ա Թ Ը)

Կիւլտիւրիւճիւ Ֆորալար վէ Հիքիայէլէր. Մալիւմա-
թը Ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. Ֆէննի Էյլէնճէլէր
վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշր օլունան մէզքիւր քիթապըն պիլիմնի ճիւ-
տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ ստ-
թըլմագտա աըր. Ֆիյ 2 Ֆրնք:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (37)

ՈՐՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏՐ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՅՐ)



Բէյ-Հո և իր մահուան ընկերը աշակողմի վերջին կախաղանին տակ բերուած էին. և այլանդակ արարողութիւնը ձախակողմէն սկսաւ, բայց սովորական դանդաղութեամբ:

Սակայն աւաղակներէն երկուքը դեանէն բաժնուեցան: Ամբողջ մոլեգին աղաղակներով ողջուեց:

Ռուսի եւ իր մարդերը շարունակեցին իրենց ահուկ զործը, և դեռ բառերգ ժամ չբջած տասը դատապաշտեալները կը խորհային երկրին ու երկիրքին մէջտեղ:

Արդէն ժամանակ էր որ ամեն բան լմնար, վասնզի մուծը պիտի կոխէր:

Վերջին մահապարտին կախուելէն ետք ժողովուրդը բաշուեցաւ գնաց, սաստիկ յուզուած, և քիչ յետոյ տանջափայրը մնացին սպան և զիւտորները որք պաշտօն ունէին մարմիւններուն վրայ հսկել այն կէտ ժամուան միջոցին ուր կախուած պէտք էին մնալ:

Ռուսի եւ իր օգնականները խոտին վրայ կծկուած էին, իրենց ախուր գործը վեջացնելու համար կը մնար դիակները գերեզմաննոց փոխադրել ուր հանրային փոսը փորուած էր առջի օրուէն ի վեր զանոնք ընդունելու համար:

Հիմակուհիմա առասպելական պատկեր մըն էր, զոր կ'ընծայէին այս երկու լուին խմբակները այդ մեռելներուն տակ զորս հովը անջրպետին մէջ կը տատանէր եւ որոց սլուէրները կ'ուրուագծուէին արեւէն կարմրած հորիզոնին վրայ:

Իրեն ելած հրամանէն աւելին ընելու շատ փութկոտ չըլլալով՝ դասապետը, որ բանիցս ժամացոյցը բնած էր, վերջապէս տուաւ մեկնումի նշանը:

Ձիւտորները փութացին կարգի մտնել և քիչ յետոյ անհետ եղան մուծին մէջ, քաղաքին կողմը:

Դահլիճն ու իր օգնականներն ոտքի ելած էին արդէն:

Ռուսի նախ վազեց Բէյ-Հօի կախաղանը զոր մեղմիւ գետին ինջեցուց, ուր մարմինը կբեցաւ անշարժ: Նոյն վայրկենին լսեց կառքի մը ազմուկը որ բանի մը քայլ անդին կը կենար, թուփի մը ետեւը:

Օժանդակներն իր օրինակին էին հետեւած. տասը մարմինները գետին փռուած էին:

—Գացէք պատգարակներ բերէք, հրամայեց. շուտով լմնողները:

Ամենքն ալ հեռացան՝ իրենց քստմնելի պետին հրամանը գործադրելու: Գիշերը աղէկ մը վրայ հասած էր, մուծ, անասող գիշեր մը, նպատակայարմար այն տարօրինակէտ խորհրդաւոր գործին որ կը կատարուէր:

—Եւ, խօսքդ բռնեցիր, ըսաւ յանկարծ ձայն մը որ ոտքուտուց գահիճը:

Ետին դարձաւ և իսկոյն ճանչցաւ Բերքինսը, որուն գալը չէր տեսած: Տրթոր քլիֆթըն իրեն կ'ընկերանար:

—Ա՛ն, շարունակեց մաքսախոյսը, աւասիկ գումարին մնացածը, հիմակ պիտի տանիմ Բէյ-Հօն, ո՛ւր է:

Գօտիին մէջ սահեցանելէն յետոյ խօսակցին տուած ծանր բնակը, Ռուսի երկու անգլիացիները տարաւ այն կախաղանին մօտ ուր պառկած էր ծովահէններուն պետը:

Հոն, Բերքինս բռնեց մարմինն ոտքերէն մինչև իր բարեկամը ուսերէն կը բռնէր, և այսպէս փոխադրեցին զայն մինչև դաշտային մեծ կառք մը զոր կը վարէր սըր Արթուր: յետոյ մեղմիւ պատկեցուցին զայն կառքին խորը դրուած բարձիւրու վրայ, բովը նստան, և ազնուականը որ անշուշտ հրահագններն սաացած էր, անմիջապէս ճամբայ հանեց կառքը:

Դահլիճը, որ այս տարօրինակ արկածէն սաստիկ կը խոզկեր, թէև ընդունած ըլլար իր հաճոյակատարութեան գինը, պահ մը անոնց հետեւեցաւ աչքերովը գէթ որքան որ մուծը կը ներէր, և յետոյ իր տեղը դարձաւ, ուր օգնականները եկած էին արդէն:

Երբ մէկիկ մէկիկ վերուցին դիակները, շնչարեցին Բէյ-Հօն անհետացումը:

Երկու ժամ ետքը՝ պատժին գործադրութենէն ուրիշ բան չէր մնացած եթէ ոչ կախաղաններուն փայտերը որոց շուրջ խորունկ բունով կը քնանային մահաշուք դահլիճները:

Այս միջոցին նաւապետն ու իր բարեկամները ամարանոց էին դարձած, ուր կախեալը դրած էին գնդամուղի սրահին մէջ, լայն և կակուղ բազմոցի մը վրայ:

Քլիֆթըն արդէն բանի մը վայրկենէ ի վեր անոր վրայ ծուած էր, երբ ոտքի ելաւ ժպտաշուրթն:

—Ի՞նչպէս է, հարցուցին միեւնոյն ժամանակ երկու հայրենակիցները:

—Յաջողեցաւ: Ռուսին շատ չէ շարչարեր: Ի՞նչ

սքանչելի «ենթակայ» : Նայեցէք սա մարմինն .

Արդարեւ ծովա հէններու նախորդ պեար դեղին ցեղին մէկ փառաւոր նմուշն էր : Միծիղի բարեխարմար յիրաւի, ինչպէս կ'ըսէր տորթորը՝ գիտնականի սկեպտու- թեամբ, մեծագին «ենթակայ» մըն էր ափիթատրոնի մը համար : Բնաւ կենդանութեան նշան չէր ցուցուներ, բայց երեսին գիծերը այնքան չէին կծկուած որքան կը կծկուին խեղդամահ եղող մարդոց դէմքերը : Յայտնի էր որ քիչ էր չարչարուած .

— Եթէ հիմակ երթար կանչէք Մէնկը, գիտել տուաւ սրբ Արթուր Էֆլէնի հրամատարին .

— Հա՛, իրաւ, պատասխանեց սա, մտնցած էի վայն .

Եւ գահապիտօրէն գուրս ելաւ՝ ճաշասրահ անցնելու համար .

Ինքզինքն ամբողջովին քրտնաջան մարտդիւթեան տուած, խոշոր մանտարէնը գերմանիոյ խլուրդի պէս կը խորդար այն թիկնաթոփին վրայ ուր ապաստանած էր ճաշէն յետոյ .

— Օն, ոտքի ելէք, սիրելի նախագահ, ըսաւ Բերբինս, ուսին վարնելով .

— Հէ՛, ի՞նչ կայ, գոչեց որկրամուրը ծանրցած արտեւանունքները մեղմիւ բանալով : Ա՛հ, դո՛ւք էք Գտա՞ք զինքը .

- Ո՞վ .
- Չուն, մտափաճառը, կարմիր-Մամուկը .
- Ինչի՞րը ատո՞ր վրայ է .
- Ա՛հ, իրաւ, բռնտէն կուգար .
- Իմնցա՛ւ, շետս եկէք .
- Չեզ հետ, ի՞նչ ընելու համար .
- Կը յիշէ՞ք որ կախուած մարդ մը գնեցի

Թուովէն :

— Այո, նոյն իսկ բսան անգամ հարցուցի թէ ի՞նչ նպատակով .

- Հիմա պիտի հասկնար, հոս է .
- Ի՞նչ, հո՞ս է, Չեր տո՞նը բերիք ձեր ճաշ- սրահին մօտ, ուր այնքան լաւ կ'ընթրուի .

Ծռլլ պաշտօնատարը մէկ ոտու մով ելած եկած էր իբր թէ ապշահարութիւնը մէկէնիմէկ երիտասարդական աշխոյժ տուած ըլլար իրեն .

- Անչուշտ, շարունակեց անգլիացին : Պիտի տեսնար, իրաւ շատ գեղեցիկ է .
- Բռնեց բազուկէն և քիչ մը բռնութեամբ բաշեց տարաւ գնդամուլի սրահը .

Սըր արթուր ջահեր վառած էր, լոյսը երևան կը հանէր աւաղակին դէմը .

Աչքերը գոցուած էին և կիսաբաց բերանը կը ցուցուներ իր գազանային ճերմակ եւ սուր, սկուանները . Դէմքն հանդարտ էր, և կարծես միները զեռ համակ- ուած չէին սահուան փայտացուածիւ ու պաղու թեամբը : Բայց վրդին շուրջը դիւրաւ կը տեսնուէր կախազանի շուանին կակտորակ պիտը : Տեղ տեղ մորթք պրդուած էր .

Մէնկ բազմոցին մօտեցած էր և հետաքրքրու- թեամբ կը դիտէր այն մարդը զոր կախազան էր շրկած .

Այս միջոցին, էլիթթըն որ ըմպելի մը պատրաս- տած էր գաւաթի մը մէջ, մարդուն վրայ ծոցեալ եւ ճարտարութեամբ փրկէն հանեց արծաթէ ճուռ խոյու- վակ մը որ ամբողջովին մխուած էր հոն՝ արծաթակարկառ ոսկորին տակ : Յետոյ մատը վերքին վրայ դրաւ, որ նեղ լամբակի մը ձև ունէր, ուրկից գուրս կ'ելլար այդ գործի- բը, և սըր Արթուրին օգնութեամբը, վեր առաւ Բէյ-Հոն բազմոցին վրայ նստեցնելու համար :

(Շար .)

ԱԶԳ

Երջանկայիշատակ Մեիթեւր Աբբա Հօր յորեկեա- նին առթիւ վեհեթիկի տպարանէն պատրաստուած Մեի- ԹԱՐ անուն պատկերազարդ հատընտիր գիրքը որ ամեն բանասիրաց ընթերցմանը իրաւամբ արժանի է, կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէլեանի Հայկական գրատունը թղթատարի ծախքը գրատան վրայ ըլլալով գին 6 Փրանք



Մ. ԵՐԱՆՈՍԵԱՆ
Կօչիակարի Խաւնոր
Զար Պօրիս փոլոց
Աղջկանց վարժարա- նին կից

Կը պատրաստուին և կը գտնուին պատրաստ ամեն տեսակ Երոպական ճաշակաւ կօչիկներ, էրիկ մարդու կանանց և տղայոց համար . ապը- րանք գլմացկուն . գիներ խիտ չափաւոր, առա- ջին գիմոլը արդէն պիտի համոզուի